	Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
Կատարման չափանիշներ	1) «ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 2) տարբերակում է ծախսերի խմբերը, 3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում, 4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է, 5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում, 6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում, 7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում, 8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը, 9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում, 10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, 11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:

	Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
Կատարման չափանիշներ	1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է, 3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում, 4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն, 5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում, 6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է, 7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է, 8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, 9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:

Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանկացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
Կատարման չափանիշներ	1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,

	9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ապրանքագիտության հիմունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	96 ժամ տեսական ուսուցում՝ 48 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ապրանքագիտության տեսության առարկայի էությունը և խնդիրները, 2) մեկնաբանի ապրանքների դասակարգման և կոդավորման սկզբունքները, 3) կատարի ապրանքների տեսականու դասակարգում, 4) ներկայացնի ապրանքներին ներկայացվող պահանջները, 5) ներկայացնի ապրանքի որակին ներկայացվող գործոնները, 6) ներկայացնի ապրանքների վերաբերյալ հայերեն տեղեկատվությանը, մականշման ձևերին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները, 7) իրականացնի ապրանքի մրցունակության գնահատում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ապրանքագիտության տեսության առարկայի էությունը և խնդիրները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության առարկան և հիմնական կատեգորիաները, 2) ճիշտ է բնութագրում պահանջմունքի բովանդակությունը, 3) ճիշտ է բացատրում ապրանքների սպառողական արժեքը, 4) ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության մեթոդը և կապը այլ գիտությունների հետ, 5) ճիշտ է սահմանում ապրանքագիտության խնդիրները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքագիտության առարկայի և հիմնական եզրույթների, պահանջմունքների ապրանքագիտական դասակարգման, ապրանքների սպառողական և փոխանակային արժեքների տարբերության, ապրանքագիտության մեջ կիրառվող գիտական ճանաչողության և էմպիրիկ մեթոդների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքագիտության առարկան, հիմնական եզրույթները, խնդիրները, օբեկտներն ու սուբյեկտները,

	▪ պահանջմունք եզրույթը, պահանջմունքների ապրանքագիտական դասակարգումը, ▪ ապրանքների սպառողական և փոխանակային արժեքների տարբերությունը, ▪ ապրանքագիտության ժամանակակից խնդիրները, ▪ ապրանքագիտության մեջ կիրառվող գիտական ճանաչողության և էմպիրիկ մեթոդները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Մեկնաբանել ապրանքների դասակարգման և կոդավորման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման նշանակությունը, սկզբունքները և կանոնները, 2) ճիշտ է բնորոշում ապրանքների դասակարգման հիմնական հատկանիշները, 3) ճիշտ է վերլուծում ապրանքների դասակարգման ձևերը, 4) ճիշտ է ներկայացնում պարենային ապրանքների դասակարգումը, 5) ճիշտ է բնութագրում ապրանքների կոդավորումը և հաշվարկում նրա իսկությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքների դասակարգման նշանակության, սկզբունքների և կանոնների, հիմնական հատկանիշների, դասակարգման մեթոդների և ձևերի, պարենային ապրանքների դասակարգման և գծիկավոր ծածկագրման հաշվարկման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքների դասակարգում եզրույթը, դերն ու նշանակությունը, խնդիրները, սկզբունքները և կանոնները, ▪ ապրանքների դասակարգման հիմնական հատկանիշները, դասակարգման մեթոդները և ձևերը, ▪ պարենային ապրանքների դասակարգումը և դասակարգման հիմնական հատկանիշները,

	▪ ապրանքների գծիկավոր ծածկագրման դերն ու նշանակությունը, զարգացման պատմությունը, կիրառման ոլորտները, ապրանքների 8 ու 13 կարգանի թվային կոդերը և դրանց կառուցվածքը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է հաշվարկում ապրանքների թվային կոդերը և պատասխանում հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համապատասխան նյութեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել ապրանքների տեսականու դասակարգում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ապրանքների տեսականու բնորոշումը, ձևերը, 2) ճիշտ է բացատրում դասակարգման հատկանիշները, 3) ճիշտ է կատարում տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշների հաշվարկը, 4) ճիշտ է վերլուծում տեսականու կառավարումը և ձևավորումը, 5) ճիշտ է ներկայացնում նոր արտադրանքի ընտրության ժամանակ հաշվի առնվող չափանիշները /ապրանքների առաքման և արտադրական հնարավորությունները բնութագրող չափանիշները/:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Հարց ու պատասխանի ընթացքում ստուգվում է ուսանողի ընդհանուր գիտելիքները պարենային ապրանքների տեսականու վերաբերյալ: Ուսանողին կտրվի հարցեր ապրանքների տեսականու բնորոշման, ձևավորման անհարժեշտության, տեսականու դասակարգման հատկանիշների և հիմնական ձևերի, ապրանքների տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի ընթացքում ուսանողին առաջարկվում է համապատասխան ցուցանիշների հաշվարկման միջոցով գնահատել կոնկրետ ապրանքային խմբի փաստացի տեսականին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքների տեսականի եզրույթը, դասակարգման հատկանիշները, ▪ տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշների բնութագրերը,

	▪ տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշների հաշվարկը, ▪ ապրանքների տեսականու ձևավորման նպատակը, սկզբունքները, ձևավորման վրա ազդող ընդհանուր և առանձնահատուկ գործոնները, ▪ նոր ապրանքների ընտրության անհրաժեշտությունը և չափանիշները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը հարցերին տալիս է ճիշտ և հիմնավորված պատասխաններ, ցուցաբերում է բավարար ինքնուրույնություն, ճիշտ է հաշվարկում և գնահատում կոնկրետ ապրանքային խմբի փաստացի տեսականին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համապատասխան նյութեր, սահիկներ և տեսականու գնահատման վերաբերյալ խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ապրանքներին ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ապրանքին ներկայացվող ընդհանուր պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ապրանքների սպառողական հատկությունների բնութագիրը, 3) ճիշտ է մեկնաբանում ապրանքի որակ հասկացությունը և ներկայացնում որակի ցուցանիշները, 4) ճիշտ է ներկայացնում պարենային ապրանքների որակ հասկացությունը, 5) ճիշտ է ներկայացնում որակի ցուցանիշները ըստ խմբերի բնութագրվող հատկությունների թվի, հատկությունների բնույթի, արտահայտման միավորի որոշման մեթոդի:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքներին ներկայացվող ընդհանուր պահանջների, սպառողական հատկությունների, որակ եզրույթի և որակի ցուցանիշների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ պահանջ եզրույթը և ապրանքներին ներկայացվող պահանջների տեսակները,

	▪ ապրանքների սպառողական հատկություններ եզրույթը, ▪ սպառողական հատկությունների անվանացանկը, ապրանքների սպառողական հատկությունների բնութագիրը, ▪ ապրանքի որակ և որակի ցուցանիշներ եզրույթները, ▪ որակի ցուցանիշների դասակարգումը և որոշման մեթոդները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ապրանքի որակին ներկայացվող գործոնները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում որակի գործոնների դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում նյութերի քիմիական, ֆիզիկական, կենսաբանական հատկությունների բնութագրերը, 3) ճիշտ է ներկայացնում ապրանքների որակի փոփոխություն առաջացնող գործոնների բնութագիրը, 4) ճիշտ է ներկայացնում ապրանքների որակի պահպանմանը նպաստող հիմնական գործոնները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքների որակի ձևավորման, խթանման և պահպանման գործոնների, նյութերի քիմիական, ֆիզիկական, ֆիզիկաքիմիական, կենսաբանական հատկությունների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքների որակի ձևավորման գործոնները, ▪ ապրանքների որակի խթանման գործոնները, ▪ ապրանքների որակի պահպանման գործոնները,

	▪ նյութերի հատկությունների դասակարգումը և վերջինիս նշանակությունը, նյութերի քիմիական, ֆիզիկական, ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունների բնութագրերը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, տեսաֆիլմեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ապրանքների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մականշման ձևերին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դերը, 2) ճիշտ է մեկնաբանում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դասակարգման հայտանիշները, 3) ճիշտ է ներկայացնում մականշման էությունը, 4) ճիշտ է ներկայացնում մականիշա-պայմանական տեղեկատվությունը, 5) ճիշտ է մեկնաբանում ապրանքի շահագործման ուղեցույցային տեղեկատվության էությունը, 6) ճիշտ է մեկնաբանում գովազդ- տեղեկատվության էությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքային տեղեկատվության դերի, դասակարգման, ապրանքային տեղեկատվության տարբեր ձևերի (բառային, թվային, պատկերային, սիմվոլային և շտրիխային), մականշման դերի, գործառույթների, արտադրական և առևտրական մականշման կրիչների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքային տեղեկատվություն եզրույթը, դերն ու նշանակությունը, ▪ ապրանքային տեղեկատվության դասակարգումը,

	▪ ապրանքային տեղեկատվության ծևերը (բառային, թվային, պատկերային, սիմվոլային և շտրիխային), ▪ ապրանքային տեղեկատվությանը ներկայացվող հիմնական պահանջները, ▪ մակնշում եզրույթը, դերն ու նշանակությունը, ▪ արտադրական և առևտրական մակնշման կրիչները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում մակնշման ու դրանում ներառված տեղեկատվական նշանների վերծանում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, ապրանքների մակնշման օրինակներ, տեսաֆիլմեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Իրականացնել ապրանքի մրցունակության գնահատում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում ապրանքի մրցունակության էությունը, 2) ճիշտ է ներկայացնում ապրանքի մրցունակության ընդհանուր խմբերը, 3) ճիշտ է ներկայացնում ապրանքի մրցունակության գնահատման գործոնները, 4) ճիշտ է կատարում ապրանքի մրցունակության գնահատումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքի մրցունակություն հասկացության, ապրանքի մրցունակության տեխնիկական, կոմերցիոն, կազմակերպչական և տնտեսական ցուցանիշների, մրցունակության գնահատման գործոնների, մրցունակության գնահատման գործընթացի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ապրանքի մրցունակություն հասկացությունը, վերջինիս դերն ու նշանակությունը, ▪ ապրանքի մրցունակության տեխնիկական, կոմերցիոն, կազմակերպչական և տնտեսական ցուցանիշները, ▪ ապրանքի մրցունակության գնահատման հիմնական գործոնները, ապրանքի մրցունակության գնային և ոչ

	գնային մեթոդները, մրցունակության գնահատման գործընթացը և ապրանքի մրցունակության բարձրացման ուղիները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տնտեսագիտության տեսության վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տնտեսագիտության տեսության առարկայի էությունը և հիմնախնդիրները, 2) բնութագրի արտադրության ռեսուրսները, գործոնները և արտադրության տիպերը, 3) բացատրի շուկայական տնտեսության սկզբունքները, 4) կատարել պահանջարկի և առաջարկի առաձգականության որոշում, 5) ներկայացնի գնի և գնագոյացման սկզբունքները, 6) ներկայացնի աշխատանքի էությունը և վարձատրման սկզբունքները, 7) ներկայացնի հարկային և պետական բյուջեի համակարգերը:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուրսառության արդյունք 1	Ներկայացնել տնտեսագիտության տեսության առարկայի էությունը և հիմնախնդիրները
Կատարման չափանիշներ	1 ճիշտ է ներկայացնում տնտեսագիտության ուսումնասիրության առարկան, հիմնական ֆունկցիաները, մեթոդները, 2) ճիշտ է դասակարգում տնտեսական կատեգորիաները, գիտի, թե ինչ է տնտեսական օրենքը, 3) ճիշտ է բացատրում տնտեսական պահանջմունքների համակարգը, տնտեսական շահերը և դրանց տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում տնտեսության 3 հիմնական հարցերը. «ինչ», «ինչպես», «ու՞մ համար», 5) ճիշտ է ներկայացնում տնտեսության համակարգի ձևերը, 6) ճիշտ է ներկայացնում «Մակրո» և «Միկրո» տնտեսությունների միջև տարբերությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ռեսանոդին կտրվեն հարցեր և առաջադրանքներ տնտեսագիտության տեսության ուսումնասիրության առարկայի, հիմնական գործառույթների, մեթոդների, տնտեսական կատեգորիաների, պահանջմունքների համակարգի, տնտեսական շահերի և դրանց տեսակների, տնտեսության համակարգի ձևերի, «Մակրո» և «Միկրո» տնտեսությունների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ տնտեսագիտության տեսության առարկան, հիմնական գործառույթները, ուսումնասիրության մեթոդները, ձևավորման և զարգացման ուղղությունները, ▪ տնտեսագիտության տեսության և մյուս գիտությունների կապը, ▪ տնտեսական հարաբերությունների համակարգը, տնտեսական կատեգորիաները և օրենքները, ▪ պահանջմունքների էությունը, դրանց ձևավորման և զարգացման պայմանները, դասակարգումը, շահերի էությունը և բնույթը, շահերի դասակարգումը, տնտեսական շահերի որոշիչ դերը, ▪ տնտեսության 3 հիմնական հարցերը, ▪ տնտեսության համակարգի ձևերը, «Մակրո» և «Միկրո» եզրույթները, դրանց տարբերությունը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական է, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված պատասխանում է հարցերին և

	կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել արտադրության ռեսուրսները, գործոնները և արտադրության տիպերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում արտադրության էությունը, ռեսուրսների գործոնները և մակարդակները, 2) ճիշտ է ներկայացնում արտադրության ռեսուրսներ-գործոններ-եկամտի տեսակներ կապը, 3) ճիշտ է մեկնաբանում արտադրությունը բնութագրող հասկացությունները, 4) ճիշտ է բացատրում արտադրության համակենտրոնացման և ապակենտրոնացման միտումների ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա, 5) ճիշտ է սահմանում, թե ինչ է «աշխատանքի արտադրողականություն» և որոնք են դրա աճի գործոնները, 6) ճիշտ է բացահայտում արտադրության ընթացքի 4 փուլերը՝ ճգնաժամ-լճացում-աշխուժացում-վերելք:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ արտադրության էության, գործոնների և ռեսուրսների, արտադրությունը բնութագրող հասկացությունների, արտադրության համակենտրոնացման և ապակենտրոնացման միտումների, աշխատանքի արտադրողականության, արտադրության ընթացքի փուլերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հասարակական վերարտադրության փուլերը, արտադրության էությունը, ռեսուրսներ, արտադրությունը բնութագրող հասկացությունները, ▪ արտադրության գործոնները, դրանց փոխներգործությունն ու համակցությունը, ▪ արտադրական ֆունկցիա, ▪ արտադրական հնարավորությունների և տնտեսական արդյունավետության կորը,

	- արտադրության համակենտրոնացում և ապակենտրոնացում եզրույթները, համակենտրոնացման և ապակենտրոնացման միտումների ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա, արտադրության ընթացքի փուլերը, «աշխատանքի արդյունավետություն» եզրույթը, «աշխատանքի արտադրողականության» էությունը և դրա աճի գործոնները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված պատասխանում է հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և հիմնական տարրերը, 2) ճիշտ է ներկայացնում շուկայի գործառույթները հասարակական կյանքում և նրա հիմնական սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության «իդեալական» մոդելները, 4) ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության 3 հիմնական ոլորտները, 5) ճիշտ է բացատրում շուկայական տնտեսության հիմնական նպատակները, առավելությունները և թերությունները, 6) ճիշտ է ներկայացնում շուկայական ենթակառուցվածքը և նրա տարրերը, 7) ճիշտ է ներկայացնում սեփականության ձևերը և դերը տնտեսական հարաբերությունների համակարգում, 8) ճիշտ է ներկայացնում պետության դերը շուկայական կառուցվածքի ձևավորման և զարգացման գործում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալների և հիմնական տարրերի, շուկայի գործառույթների, հիմնական սկզբունքների, շուկայական տնտեսության «իդեալական» մոդելների, շուկայական տնտեսության հիմնական նպատակների, առավելությունների և

	թերությունների, շուկայական ենթակառուցվածքի և դրա տարրերի, սեփականություն եզրույթի, սեփականության հարաբերությունների և ձևերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ շուկայական տնտեսության էությունը և դրա տարրեր սահմանումները, ձևավորման նախադրյալները ▪ շուկայական տնտեսության հիմնական տարրերը, ▪ շուկայի կառուցվածքը, օբյեկտները, սուբյեկտները, գործառույթները, հիմնական սկզբունքները, ▪ շուկայական ենթակառուցվածքը հասկացությունը, տարրերը և դրանց բնութագիրը, ▪ շուկայական տնտեսության հիմնական նպատակները, դրական և բացասական կողմերը, ▪ մրցակցություն հասկացությունը, ժամանակակից շուկայի մոդելները և մրցակցությունը, շուկայի «իդեալական» մոդելը, ▪ դասական լիբերալիզմը և «անտեսանելի ձեռքի» հայեցակարգը, պետության դերը շուկայական կառուցվածքի ձևավորման և զարգացման գործում, ▪ սեփականությունը որպես տնտեսական կատեգորիա, էությունը, ձևերը, սեփականության իրավունքը տնտեսական հարաբերությունների համակարգում: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված պատասխանում է հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել պահանջարկի և առաջարկի առաձգականության որոշում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում «պահանջարկի օրենք»-ի էությունը, 2) ճիշտ է բացատրում պահանջարկի փոփոխությունը, ոչ գնային գործոնները, 3) ճիշտ է ներկայացնում «առաջարկի օրենք»-ը ,

	4) ճիշտ է բացահայտում առաջարկի մեծության վրա ազդող գործոնները, 5) ճիշտ է ներկայացնում առաջարկի և պահանջարկի կապը, 6) ճիշտ է որոշում պահանջարկի և առաջարկի առաձգականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ պահանջարկի և դրա մեծության վրա ազդող գործոնների, «պահանջարկի օրենք»-ի, առաջարկի և դրա մեծության վրա ազդող գործոնների, «առաջարկի օրենք»-ի, առաջարկի և պահանջարկի կապի, առաջարկի և պահանջարկի կորերի, առաձգականության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ պահանջարկի էությունը, պահանջարկի օրենքը, անհատական և ամբողջական պահանջարկ, ▪ պահանջարկի փոփոխությունը և վերջինիս մեծության վրա ազդող գործոնները, ▪ առաջարկի էությունը, առաջարկի օրենքը, անհատական և ամբողջական առաջարկ, ▪ առաջարկի փոփոխությունը և վերջինիս մեծության վրա ազդող գործոնները ▪ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, շուկայական հավասարակշռություն և շուկայական գին, ▪ պահանջարկի և առաջարկի առաձգականության էությունը, առաձգականություն ըստ գնի, եկամտի, խաչաձև ճկունություն: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված պատասխանում է հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, համապատասխան խնդիրներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել գնի և գնագոյացման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում գին հասկացությունը, բացատրում է շուկայական գների ձևավորումը և կարգավորումը,

	2) ճիշտ է ներկայացնում գնագոյացման վերաբերյալ 2 մոտեցումները՝ «օբյեկտիվություն» և «սուբյեկտիվություն», 3) ճիշտ է մեկնաբանում շուկայական տնտեսության պայմաններում գների գործառույթներ, 4) ճիշտ է ներկայացնում գների համակարգի 3 հիմնական ձևերը, 5) ճիշտ է ներկայացնում գների և սակագների տեսակները, 6) ճիշտ է սահմանում մեծածախ և մանրածախ գների հասկացությունները և ձևավորման եղանակը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ գին հասկացության, գների ձևավորման մոտեցումների, շուկայական տնտեսության պայմաններում գների գործառույթների, համակարգի, գների և սակագների տեսակների, ապրանքի մեծածախ և մանրածախ գների հաշվարկի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ գին եզրույթը, գինը շուկայական տնտեսության պայմաններում, ▪ գնի տեսությունները, ▪ գնի հիմնական գործառույթները շուկայական տնտեսության պայմաններում ▪ գների համակարգ եզրույթը, ▪ պայմանագրային գներ, ▪ պետական գներ, ▪ համաշխարհային գներ, ▪ մեծածախ գին հասկացությունը և վերջինիս ձևավորումը, ▪ մանրածախ գին հասկացությունը և վերջինիս ձևավորումը, ▪ գնագոյացման մեթոդները, ▪ գների պետական կարգավորում հասկացությունը և մեթոդները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, համապատասխան խնդիրներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել աշխատանքի էությունը և վարձատրման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատանքի դրդապատճառները և խթանները, 2) ճիշտ է մեկնաբանում աշխատանքի արտադրողականությունը և չափման մեթոդները, 3) ճիշտ է ներկայացնում մեկ աշխատողի արտադրանքը, 4) ճիշտ է մեկնաբանում աշխատավարձի չափի տարբերությունը, 5) ճիշտ է ներկայացնում աշխատավարձի ձևավորման շուկայական մեխանիզմը, 6) ճիշտ է մեկնաբանում 'նվազագույն աշխատավարձի' հասկացությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ աշխատանքի դրդապատճառների և խթանների, արտադրողականության և չափման մեթոդների, աշխատանքի շուկայի բնորոշ գծերի և առանձնահատկությունների, նվազագույն աշխատավարձի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ աշխատանքը որպես շուկայական տնտեսության ռեսուրս, ▪ աշխատանքի վերաբերյալ տեսությունները, ▪ աշխատանքի շուկա հասկացությունը, ▪ աշխատանքի առաջարկի և պահանջարկի կորերը, ▪ աշխատավարձի էությունը և գործառույթները, ▪ աշխատավարձի ձևերը, ▪ անվանական և ռեալ աշխատավարձ: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված է պատասխանում հարցերին և

	կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել հարկային և պետական բյուջեի համակարգերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում հարկերի տնտեսագիտական էությունը, 2) ճիշտ է սահմանում հարկային համակարգի տարրերը և հարկի վճարման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում հարկերի տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում, թե ինչպես են ձևավորվում և ծախսվում պետական բյուջեի եկամուտները, 4) ճիշտ է ներկայացնում, թե ինչպես են դասակարգվում պետական բյուջեի ծախսերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ հարկերի տնտեսագիտական էության, գործառույթների, հարկման սկզբունքների, հարկային քաղաքականության, հարկային համակարգի տարրերի, հարկի վճարման եղանակների, հարկի տեսակների, պետական բյուջեի էության, գործառույթների, բյուջետային քաղաքականության, բյուջետային համակարգի, վերջինիս տարրերի, պետական բյուջեի եկամտային և ծախսային մասերի, կոնկրետ հարկատեսակների հաշվարկների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հարկերի տնտեսագիտական էությունը և գործառույթները, ▪ հարկման սկզբունքները, ▪ հարկային քաղաքականությունը և հարկային համակարգի տարրերը, ▪ հարկի վճարման եղանակները, ▪ հարկի տեսակները, ▪ պետական բյուջեի էությունը և գործառույթները,

	 բյուջետային քաղաքականության էությունը, բյուջետային համակարգը և վերջինիս տարրերը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ ու տրամաբանված պատասխանում է հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, ոլորտի վերաբերյալ ՀՀ –ում գործող օրենքներ, թեստեր, համապատասխան խնդիրներ և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 26 ժամ գործնական աշխատանք՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՊՐ-5-20-002 «Տնտեսագիտության տեսություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաշվապահական հաշվառման էությունը և մեթոդը, 2) ներկայացնի հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, 3) ներկայացնի հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, 4) իրականացնի դեբիտորական պարտքի հաշվառումը, 5) իրականացնի ոչ ընթացիկ նյութական ակտիվների հաշվառումը,

	6) իրականացնի պարտավորությունների հաշվառումը, 7) իրականացնի եկամուտների և ծախսերի հաշվառումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուրսառության արդյունք 1	Ներկայացնել հաշվապահական հաշվառման էությունը և մեթոդը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքները, խնդիրները, առարկան և օբյեկտները, 2) ճիշտ է ներկայացում հաշվապահական հաշվառման մեթոդը, նրա տարրերի համառոտ բնութագրումը, 3) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կազման սկզբունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի, գործնական առաջադրանքների և խմբային քննարկումների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ հաշվապահական հաշվառման կազմակերպման անհրաժեշտության, հաշվապահական հաշվառման միջոցով տեղկատվության հավաքման և որոշումների կայացման, հաշվապահական հաշվառման խնդիրների, առարկայի և օբյեկտների, մեթոդի և դրա տարրերի, սկզբունքների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հաշվապահական հաշվառման կազմակերպման անհրաժեշտությունը, ▪ հաշվապահական հաշվառման միջոցով տեղկատվության հավաքումն ու որոշումների կայացումը, ▪ հաշվապահական հաշվառման խնդիրները՝ միջոցների աղբյուրների և տեղաբաշխման առկայության և շարժի նկատմամբ վերահսկողությունը, արտաքին օգտագործողներին արժանահավատ տեղեկատվության տրամադրումը, կառավարչական որոշումներ կայացնելու տեղեկատվություն տրամադրումը, ▪ հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերի՝ փաստաթղթավորման, գույքագրման, գնահատման, կալկուլյացիայի, հաշիվների ու կրկնակի գրանցման, հաշվապահական հաշվեկշռի և հաշվետվության համառոտ բնութագրումը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական , եթե ուսանողը ճիշտ է ընկալում հաշվապահական հաշվառումը՝ որպես տեղեկատվական և որոշումների կայացմանն աջակցող համակարգի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին», համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում տեղեկատվության ամփոփման և կրկնակի արտացոլման հաշվեկշռային մեթոդը, դրա դերն ու նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը, կազմման սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշիվներ, դրանց կառուցվածքը, տեսակները և գրանցումներ կատարելու կարգը, 4) ճիշտ է սահմանում կրկնակի գրանցման էությունը և ֆունկցիաները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ տեղեկատվության ամփոփման և կրկնակի արտացոլման հաշվեկշռային մեթոդի, դրա դերի ու նշանակության, հաշվեկշռի կազմի և կառուցվածքի, ֆինանսական արդյունքների, հաշվետվության կազմի և կառուցվածքի, հաշվապահական հաշիվների կառուցվածքի, ակտիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգի, պասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգի, ակտիվապասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգի, կրկնակի գրանցման էության և ֆունկցիաների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - ակտիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը, - պասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը,

	▪ ակտիվապասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը, ▪ հաշվեկշռային փոփոխությունների՝ ակտիվային, պասիվային, ակտիվապասիվային ավելացումով և նվազեցումով դասակարգումը. ▪ հաշվեկշռի կազմը և կառուցվածքը, ▪ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կազմը և կառուցվածքը, ▪ հաշվապահական հաշիվը որպես հաշվապահական հաշվեկշիռը մանրամասնելու միջոց, ▪ հաշվապահական հաշիվների կառուցվածքը, ▪ ակտիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը, ▪ պասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը, ▪ ակտիվապասիվային հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը, ▪ կրկնակի գրանցման անհրաժեշտությունը և գործառույթները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է մեկնաբանում հաշվապահական հաշիվներն ու կրկնակի գրանցման գործառույթները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում հաշիվների դասակարգումը ըստ տնտեսական բովանդակության և կառուցվածքի, 2) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի էությունը, կառուցվածքը և բովանդակությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, տարբերակել հաշվապահական

	հաշիվները՝ ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի, օգտվել հաշվային պլանից, ձևակերպել տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցությունների, ներկյացնել արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական հաշվառման համակարգում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հաշվային պլանը որպես գործառնությունների գրանցման ու խմբավորման պլան, ▪ հաշվային պլանը որպես տնտեսական բովանդակությամբ դասակարգված հաշիվների ամբողջություն՝ հաշիվների դասեր, խմբեր առաջին և երկրորդ կարգի հաշիվներ, ▪ հաշվային պլանի դասիչները՝ ոչ ընթացիկ ակտիվներ, ընթացիկ ակտիվներ, սեփական կապիտալ, ոչ ընթացիկ պարտավորություններ և այլն. ▪ ֆինանսական հաշվառման, հաշվեկշռային, գործունեության արդյունքների, կառավարչական հաշվառման, արտահաշվեկշռային հաշիվներ. ▪ հաշիվների կողավորումը: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել դեբիտորական պարտքի հաշվառումը.
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում դեբիտորական պարտքերի դասակարգումն ու գնահատումը, 2) ճիշտ է կատարում անհուսալի պարտքերի դուրս գրում և վերականգնում, 3) ճիշտ է կատարում կանխավճարների հաշվառումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ դեբիտորական պարտքերի ձևավորման,

	դասակարգման ու գնահատման, անհուսալի և կասկածելի պարտքերի ձևավորման, անհուսալի պարտքերի դուրսգրման և վերականգնման, կանխավճարների ձևավորման և հաշվառման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ դեբիտորական պարտքի ձևավորումը, ▪ դեբիտորական պարտքերի դասակարգումը, ▪ դեբիտորական պարտքերի գնահատումը, ▪ անհուսալի պարտքերի և կասկածելի պարտքերի ձևավորումը, ▪ անհուսալի պարտքերի դուրսգրման մեկնաբանումը, ▪ անհուսալի պարտքերի վերականգնման մեկնաբանումը. ▪ կանխավճարների ձևավորումը և հաշվառման տարբերությունները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է մեկնաբանում դեբիտորական պարտքի հաշվառումը և կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ռիսումնառության արդյունք 5	Իրականացնել ոչ ընթացիկ նյութական ակտիվների հաշվառումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում հիմնական միջոցների դասակարգումը, գնահատումը և հաշվառումը, 2) ճիշտ է կատարում հիմնական միջոցների մաշվածության հաշվառումը, 3) ճիշտ է կատարում հիմնական միջոցների նորոգման ծախսերի և կապիտալացվող ծախսումների հաշվառումը, 4) ճիշտ է կատարում հիմնական միջոցների վերագնահատման ու գույքագրման արդյունքների հաշվառումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ռիսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ հիմնական միջոցների հասկացության,

	սկզբնական, մնացորդային և գնահատման արժեքների, հիմնական միջոցների հաշվառման առանձնահատկության, հիմնական միջոցների մաշվածության հաշվառման, հիմնական միջոցների նորոգման ծախսերի և կապիտալացվող ծախսումների հաշվառման, հիմնական միջոցների վերագնահատման, գույքագրման և դրա արդյունքների հաշվառման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հիմնական միջոցներ եզրույթը և դասակարգումը, ▪ հիմնական միջոցների սկզբնական, մնացորդային և գնահատման արժեքները. ▪ հիմնական միջոցների հաշվառման առանձնահատկությունը, ▪ հիմնական միջոցների մաշվածության բովանդակությունը և հաշվառումը, ▪ հիմնական միջոցների նորոգման ծախսերի բովանդակությունը, ▪ կապիտալացվող ծախսումների բովանդակությունը. ▪ նորոգման ծախսերի և կապիտալացվող ծախսումների հաշվառումը, ▪ հիմնական միջոցների վերագնահատման բովանդակությունը. ▪ հիմնական միջոցների գույքագրումը և դրա արդյունքների հաշվառումը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է մեկնաբանում ոչ ընթացիկ նյութական ակտիվների հաշվառումը և կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Իրականացնել պարտավորությունների հաշվառումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում պարտավորությունների դասակարգումը, 2) ճիշտ է կատարում երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառումը,

	3) ճիշտ է կատարում աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների հաշվառումը, 4) ճիշտ է կատարում առհաշիվ անձանց հետ հաշվարկների հաշվառումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ պարտավորությունների առաջացման և դասակարգման, երկարաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառման, կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառման, աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների ձևավորման և հաշվառման, առհաշիվ անձանց հետ հաշվարկների հաշվառման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ պարտավորությունների առաջացումը և դասակարգումը ▪ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառումը. ▪ կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառումը, ▪ աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների ձևավորումը. ▪ աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների հաշվառումը, ▪ առհաշիվ անձանց և դեբիտորական պարտքերի միջև տարբերությունները. ▪ առհաշիվ տրված գումարների դեպքերի նկարագրումը և հաշվառումը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է մեկնաբանում պարտավորությունների հաշվառումը և կատարում առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համացանցից վերցված այդ ոլորտի նորույթներ պարունակող նյութեր, որևէ կոկրետ ոլորտում օգտագործվող հաշվապահական բլանկներ և փաստաթղթեր, թեստեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Իրականացնել եկամուտների և ծախսերի հաշվառումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը,

	2) ճիշտ է կատարում ոչ գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը, 3) ճիշտ է կատարում արտասովոր ծախսերի հաշվառումը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Իրականացնել ապրանքների դասավորումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում ապրանքների տեղադրում և դասավորում եզրույթները, 2) ճիշտ է ներկայացնում ապրանքների դասավորման կանոնները, 3) ճիշտ է պարզաբանում ապրանքի ցուցադրման տեղի ազդեցությունը վաճառքի ծավալների վրա, 4) ճիշտ է ներկայացնում ապրանքների դասավորման ձևերը, 5) ճիշտ է կատարում ապրանքների տեղադրումն ու դասավորումը առևտրական սրահում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ապրանքների տեղադրում և դասավորում եզրույթների, վաճառքի կետի, ապրանքների դասավորման ձևերի և կանոնների, վաճառքի ծավալների վրա ապրանքի ցուցադրման տեղի ազդեցության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - ապրանքների տեղադրման և դասավորման դերն ու նշանակությունը մերչանդայզինգում, - ապրանքների տեղադրում և դասավորում եզրույթները, - վաճառքի կետ եզրույթը, - ապրանքների դասավորման ձևերը և կանոնները, - ապրանքի ցուցադրման տեղի ազդեցությունը վաճառքի ծավալների վրա:

	Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կիրառել առևտրական սրահի գովազդի միջոցները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում առևտրական սրահի գովազդի միջոցների դերը մերչանդայզինգում, 2) ճիշտ է ներկայացնում առևտրական սրահի գովազդի միջոցների տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում առևտրական սրահի գովազդային միջոցների մշակման և տեղաբաշխման կանոնները, 4) ճիշտ է կատարում առևտրական սրահի գովազդային միջոցների տեղաբաշխումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ առևտրական սրահի գովազդի միջոցների նշանակության և դերի, գործառույթների և խնդիրների, առևտրական սրահի գովազդի միջոցների տեսակների, դրանց մշակման և տեղաբաշխման կանոնների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ առևտրական սրահի գովազդի միջոցների նշանակությունը և դերը, ▪ առևտրական սրահի գովազդի միջոցների գործառույթները և խնդիրները, ▪ առևտրական սրահի գովազդի միջոցների տեսակները, ▪ խանութի գործառնական գոտիները և գովազդի միջոցները, առևտրական սրահի գովազդի միջոցների տեղաբաշխման կանոնները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ռիսումնառության արդյունք 7	Ներկայացնել խանութի առևտրական սրահի մթնոլորտի դերը մերչանդայզինգում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում առևտրական սրահի մթնոլորտի դերը խանութի դրական կերպարի ստեղծման գործում, 2) ճիշտ է ներկայացնում խանութի մթնոլորտի զգայական գործոնները և դրանց ազդեցությունը սպառողների վարքագծի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ռիսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ առևտրական սրահի մթնոլորտի դերի, խանութի մթնոլորտի ձևավորման կազմակերպչական, հոգեբանական, զգայական գործոնների, սպառողների վարքագծի վրա խանութի մթնոլորտի զգայական գործոնների ազդեցության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ առևտրական սրահի մթնոլորտի դերն ու նշանակությունը մերչանդայզինգում, ▪ խանութի մթնոլորտի ձևավորման կազմակերպչական, հոգեբանական, զգայական գործոնները, ▪ խանութի մթնոլորտի զգայական գործոնների ազդեցությունը սպառողների վարքագծի վրա: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-008
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակն է ուսանողի մոտ ձևավորել Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերի և դրա մասնակիցների իրավասության, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքների, համապատասխանության գնահատման բնագավառում համապատասխանության հավաստման գործընթացին մասնակիցների հավատարմագրման, արտադրանքի իրացման պայմանների, համապատասխանության հավաստման մասնակիցների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գիտելիքներ և դրանք կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ստանդարտացման և համապատասխանության գնահատման հետ առնչվող հիմնական հասկացությունները և ընդհանուր դրույթները , 2) տարբերակի տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը, 3) ներկայացնի Հայաստանի Հանրապետության միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ անդամակցությունը, 4) կատարի համապատասխանության գնահատում և պարզաբանի համապատասխանության հավաստման գործընթացը, 5) ներկայացի արտադրանքի սերտիֆիկացման /գնահատման/ մարմինների և փորձարկման լաբորատորիաների մասին տեղեկատվություն, 6) ներկայացնի հավատարմագրման գործընթացի կազմակերպումը,

	7) ներկայացնի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության էությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուրսառության արդյունք 1	Ներկայացնել ստանդարտացման և համապատասխանության գնահատման հետ առնչվող հիմնական հասկացությունները և ընդհանուր դրույթները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ստանդարտացմանը վերաբերող իրավական հիմքերը, 2) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նպատակը, 3) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման սկզբունքները, 4) ճիշտ է տարբերակում արտադրանքին վերաբերվող տեխնիկական կանոնակարգերը, 5) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տեսակները, 6) ճիշտ է ներկայացնում ստանդարտների ընդունման և հաստատման ընթացակարգը, 7) ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ռեսուրսողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ստանդարտացման նպատակի, սկզբունքի, իրավական հիմքերի, տեխնիկական կանոնակարգերի, նորմատիվ փաստաթղթերի տեսակների, ընդունման և հաստատման ընթացակարգերի, համապատասխանության գնահատման ձևերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ստանդարտացման էությունը, անհրաժեշտությունը, նպատակները, խնդիրները, ▪ ստանդարտացման նորմերի, պահանջների միջազգայնացումը արդի ժամանակահատվածում, ▪ ստանդարտացման բնագավառում որդեգրվող զարգացումները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական

	նյութեր, ստանդարտներ, համանման այլ նորմատիվ փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերը, 2) ճիշտ է ներկայացնում պարտադիր պահանջները տեխնիկական կանոնակարգերի, 3) ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի ընդունման և հաստատման ընթացակարգերը, 4) ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տարբերությունը, 5) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տեսակները և դրանց բնույթը, 6) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման սկզբունքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է ընթացիկ հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է տեխնիկական կանոնակարգերից օգտվելով ձևավորել ոչ պակաս 3 ապրանքատեսակի ստանդարտներում ներառվող ցուցանիշները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ տեխնիկական կարգավորումներ և տեխնիկական կանոնակարգ՝ - տեխնիկական կարգավորման ձևեր, - տեխնիկական կարգավորման բաղադրիչներ, - տեխնիկական կարգավորման սկզբունքներ, - տեխնիկական կանոնակարգերի տեսակները, - տեխնիկական կանոնակարգերի կառուցվածքը, - տեխնիկական կանոնակարգերի բովանդակությունը, - տեխնիկական կանոնակարգերի կիրառումը, - տեխնիկական կանոնակարգերի մշակման կարգը,

	▪ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր՝ - ստանդարտներ, - տեխնիկական պայմաններ, - տեխնիկա-տնտեսական տեղեկատվության դասակարգիչներ, - պետական նշանակություն ունեցող ստանդարտացման այլ նորմատիվային փաստաթղթեր օրինակ՝ ղեկավար փաստաթղթեր և այլն, ▪ ստանդարտների տեսակները՝ - հիմնադրական ստանդարտներ, - արտադրանքի/ ծառայությունների/ստանդարտներ, - աշխատանքների/գործընթացների ստանդարտներ, - վերահսկման մեթոդների ստանդարտներ, ▪ տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների առանձնահատկությունները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու մեթոդական գրականություն, տեխնիկական կանոնակարգեր ,ստանդարտներ և այլ նորմատիվ փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել Հայաստանի Հանրապետության միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ անդամակցությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում Հայաստանի միջազգային համագործակցությունը, 2) ճիշտ է ներկայացնում ստանդարտացման միջազգային կազմակերպություն /ԻՍՕ/ համագործակցությունը, ԻՍՕ ստանդարտները, դրանց ընդունումը և հաստատումը Հայաստանի Հանրապետությունում,

	3) ճիշտ է ներկայացնում անդամակցությունը Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային քննարկումների արդյունքների հիման վրա: Քննարկման համար ուսանողներին առաջարկվելու է առնվազն երեք թեմա, որոնք պարունակում են ստանդարտացման և համապատասխանության հավաստման բնագավառում Հայաստանի միջազգային պայմանագրերի պահանջները ներառող իրավիճակներ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ստանդարտացման տնտեսական հիմունքները հեռանկարային ուղղությունները, ▪ միջազգային և ատրիստացմանային ստանդարտացում, ▪ համապատասխանության գնահատման տիպային սխեմաները և դրանց առանձնահատկությունները, ▪ ԻՍՕ ստանդարտների կառուցվածքը, բովանդակությունը , կիրառման անհրաժեշտությունը և առանձնահատկությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողները քննարկման ընթացքում ցուցաբերում են բնագավառի իրավական ակտերի դրույթների և միջազգային պայմանագրերի պահանջների բավարար և տրամաբանված իմացություն, դրանք կարողանում են համադրել և ճիշտ եզրահանգումներ կատարել, քննարկման ընթացքում խոսքը ներկայացնում են տրամաբանական շարադրանքով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բնագավառին վերաբերյալ Հայաստանի միջազգային պայմանագրերը, Հայաստանի օրենքները, գերատեսչական նորմատիվ ակտերը, ուսումնական և ցուցադրական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել համապատասխանության գնահատում և պարզաբանել համապատասխանության հավաստման գործընթացը
Կատարման չափանիշներ	3) ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը,

	4) ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման նպատակը, 5) ճիշտ է ներկայացնում «համապատասխանության հավաստում» հասկացությունը, 6) ճիշտ է ներկայացնում համապատասխանության հավաստման ձևերը, 7) ճիշտ է ներկայացնում համապատասխանության կամավոր հավաստում և պարտադիր հավաստում, 8) ճիշտ է ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատը, պետական գրանցումը անասնաբուժասանիտարական փորձաքննությունը, հայտարարագիրը և շուկայում շրջանառության միասնական նշանը, 9) ճիշտ է ներկայացնում. համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային քննարկումների արդյունքների հիման վրա: Քննարկման համար ուսանողներին առաջարկվելու է առնվազն երեք թեմա, որոնք պարունակում են ստանդարտացման և համապատասխանության հավաստման բնագավառում կազմակերպության իրավասությունների պահանջները ներառող իրավիճակներ, ցուցադրի արտադրանքի համապատասխանության հավաստագրման գործընթացի համար ձևավորված հիմքերի և դրա անհրաժեշտության հիմնավորման բնագավառում իր իմացությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ համապատասխանության գնահատման հիմունքները, ▪ համապատասխանության գնահատման ձևերը, ▪ համապատասխանության գնահատման իրավական հիմքերը < <-ում, ▪ համապատասխանության գնահատման սկզբունքները և կանոնները , ▪ արտադրանքի համապատասխանության գնահատման ձևի ընտրություն , ▪ համապատասխանության հայտարարագրման սխեմաները և դրանց առանձնահատկությունը, ▪ պետական գրանցման ընթացակարգը և առանձնահատկությունները, ▪ նարահայտ սննդամթերքի պետական գրանցման ընթացակարգը, ▪ համապատասխանության պարտադիր և կամավոր գնահատումը,

	▪ համապատասխանության գնահատման մասնակիցները, ▪ արտադրանքի համապատասխանության հավաստումը, ▪ սերտիֆիկացման սխեմանե: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, համապատասխան իրավական ակտեր, համապատասխանության հավաստագրման գործընթացին վերաբերող փաստաթղթերի նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել արտադրանքի սերտիֆիկացման /գնահատման/ մարմինների և փորձարկման լաբորատորիաների մասին տեղեկատվություն
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման /գնահատման/ մարմիններ հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում փորձարկման լաբորատորիաներ հասկացությունը, 3) ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի իրացման պայմանները, 4) ճիշտ է ներկայացնում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման պայմանները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ, սերտիֆիկացման /գնահատման/ մարմինների, փորձարկման լաբորատորիաների, ՀՀ տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման և ներմուծման ենթակա արտադրանքի իրացման պայմանների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ համապատասխանության գնահատման ոլորտի ազգային և միջազգային իրավական ակտերը,

	փորձարկման լաբորատորիաներին ներկայացվող պահանջները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու մեթոդական գրականություն, ոլորտին համապատասխան նորմատիվ և այլ փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել հավատարմագրման գործընթացի կազմակերպումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հավատարմագրում հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում հավատարմագրման իրականացման իրավական հիմքերը / իրավական ակտերի և միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17000 համակարգի ստանդարտների պահանջներին (այսուհետ՝ հավատարմագրման չափանիշներ) համապատասխան/, 3) ճիշտ է ներկայացնում հավատարմագրման գործընթացը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ըստ հանձնարարականի պետք է կատարի հավատարմագրման հետ կապված գործողությունների շարքը: Խմբային քննարկումների ընթացքում ուշադրություն է դարձվում հավատարմագրման համակարգի անհրաժեշտության և այն ապահովելու ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների բնագավառում ուսանողի ցուցաբերած գիտելիքների վրա, իսկ գործնական հանձնարարության ընթացքում նա պետք է լրացնի անհրաժեշտ փաստաթղթեր: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք, «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք, «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենք: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ, բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթեր, օրենքներ :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության էությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պետական վերահսկողության հիմնական խնդիրները, 2) ճիշտ է ներկայացնում պետական վերահսկողություն իրականացնող մարմին հասկացությունը, 3)ճիշտ է ներկայացնում պետական վերահսկողության իրականացմանն առնչվող իրավական ակտերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությանը՝ Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ստուգաթերթերի տեսակները, ▪ ՎԻՎ օրենսդրություն, ▪ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, ▪ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ▪ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ, բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթեր, օրենքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և բավարար հմտություններ սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների վերաբերյալ: Մոդուլը յուրացնելուց հետո նրանք կտիրապետեն սննդամթերքի որակի և անվտանգության ոլորտի գործող սահմանված նորմերին և պահանջներին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի սննդամթերքի որակի և անվտանգության էությունը, անհրաժեշտությունը և իրավական հիմքերը, 2) իրականացնի պարենային հումքի ու սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների հսկողություն, 3) ներկայացնի պարենային հումքի և սննդամթերքի անվտանգության պահանջները սահմանող ցուցանիշների հիմնական խմբերը, 4) ներկայացնի օրգանիկ սննդամթերքի էությունը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սննդամթերքի որակի և անվտանգության էությունը, անհրաժեշտությունը և իրավական հիմքերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում որակի և անվտանգության էությունը, 2) ճիշտ է ներկայացնում որակի և անվտանգության անհրաժեշտությունը, 3) ճիշտ է ներկայացնում սննդամթերքի անվտանգության վերաբերող իրավական հիմքերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին

	կտրվեն հարցեր և առաջադրանքներ որակի և անվտանգության էություն, անհրաժեշտության և իրավական հիմքերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ սննդամթերքի անվտանգության զարգացումները ՀՀ-ում ▪ սննդամթերքի անվտանգության վերաբերող իրավական հիմքերը ՀՀ-ում - «Անվտանգության մասին» օրենքը, - տեխնիկական կանոնակարգերը, - կառավարության որոշումները և այլն: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, միտքը ձևակերպում է գրագետ ու տրամաբանված և կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ, բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթեր, օրենքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել պարենային հումքի ու սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների հսկողություն
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում միջազգային և եվրոմիության երկրների կողմից որակի և անվտանգության ներկայացված պահանջները, 2) ճիշտ է տարբերակում որակի և անվտանգության մակարդակները, 3) ճիշտ է տարբերակում ապրանքային խմբերի որակական ցուցանիշները, 4) ճիշտ է ներկայացնում սննդամթերքի որակի բաղադրիչները, 5) ճիշտ է կատարում պարենային հումքի ու սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների հսկողությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ միջազգային և եվրոմիության երկրների

	կողմից որակի և անվտանգության ներկայացվող պահանջների, մակարդակների, ապրանքային խմբերի որակական բաղադրիչների, ցուցանիշների և հսկողության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ ▪ որակի և անվտանգության միջազգային և եվրոմիության երկրների հսկման մակարդակները՝ արտադրական, վարչական, պետական, հասարակական, ▪ սննդամթերքի որակի բաղադրիչները՝ զգայաբանական, սննդարար, հիգիենիկ, ֆունկցիոնալ: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները հիմնականում կատարվել են ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ, բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պարենային հումքի և սննդամթերքի անվտանգության պահանջները սահմանող ցուցանիշների հիմնական խմբերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մթերքում նորմավորվող թունավոր տարրերի թույլատրելի մակարդակները, 2) ճիշտ է ներկայացնում մթերքում նորմավորվող ռադիոնուկլեիդների թույլատրելի մակարդակները, 3) ճիշտ է ներկայացնում մթերքում նորմավորվող հակաբիոտիկների թույլատրելի մակարդակները, 4) ճիշտ է ներկայացնում մթերքում հորմոնալ պատրաստուկների թույլատրելի մակարդակները, 5) ճիշտ է ներկայացնում մթերքում մանրէների խմբերի թույլատրելի մակարդակները, 6) ճիշտ է ներկայացնում մթերքում միկոտոկսիների թույլատրելի մակարդակները, 7) ճիշտ է ներկայացնում մթերքում սննդային հավելումների թույլատրելի մակարդակները, 8) ճիշտ է ներկայացնում մթերքում վնասակար խառնուկների թույլատրելի մակարդակները, 9) ճիշտ է ներկայացնում մթերքում պեստիդների թույլատրելի մակարդակները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր և

	առաջադրանքներ պարենային հումքի և սննդամթերքի անվտանգության պահանջները սահմանող ցուցանիշների հիմնական խմբերի թույլատրելի մակարդակների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ ▪ պարենային հումքի և սննդամթերքի անվտանգության հիմնական խմբերի բաղադրիչները. - թունավոր տարրեր (ցինկ, կադմիում, կապար, արսեն, սնդիկ և այլն), - ռադիոնուկլեիդներ (ստրոնցիում -90, ցեզիում – 137 և այլն), - հակաբիոտիկներ (տետրացիկլին, լևոմիցիտին, պենիցիլին և այլն), - հորմոնալ պատրաստուկներ (բետաբլոկատորները, դիէտիլստիլբեստրոլը, էստրոդիոլը, տեստոստերոնը և այլն), - մանրէների խմբեր, - միկոտոկսիններ (պատուլինը, աֆլատոկսինները, դեզօքսինիվալենոլը, T-2 տոքսինը և այլն), - սանիտարա – բնորոշ մանրէներ, որոնց են դասվում մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ – անաերոբ մանրէները (ՄԱՖԱՄ) և աղիքային ցուպիկի խմբի մանրէները (ԱԾԽՄ) կամ կոլիֆորմներ, - պայմանական ախտածին մանրէներ, որոնց են դասվում E.col, S.aureus, Boteus ցեղի բակտերիաները B.cereus և սուլֆիտվերականգնող կլոստրիդիումներ, - ախտածին մանրէներ, այդ թվում սալմոնելներ, - փչացման մանրէներ, որոնցից են բորբոսասնկերը և խմորասնկերը, - սննդային հավելումների հիմնական խմբեր (հակաօքսիդիչներ, զույների պահպանմանը նպաստող նյութեր, ներկանյութեր, կայունացուցիչներ, քաղցրացուցիչներ, փխրեցուցիչներ, թանձրացուցիչներ, խտարարներ, դոնդողագոյացուցիչներ, էմուլսարարներ, հոտի և համի ուժեղացուցիչներ, պահածոյացնողներ և այլն), - վնասակար խառնուկներ, - պեստիցիդների խմբեր (հերբիցիդներ, ինսեկտիցիդներ, զոոցիդներ, ֆունգիցիդներ): Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները հիմնականում կատարվել են ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

	ուսումնական և մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել օրգանիկ սննդամթերքի էությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գենոմոդիֆիկացված մթերքը և բաղադրիչները, 2) ճիշտ է բնութագրում էկոլոգիապես մաքուր համարվող սննդամթերք:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ գենոմոդիֆիկացված և էկոլոգիապես մաքուր համարվող սննդամթերքը վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ - սննդամթերքի գենետիկական անվտանգությունը, - էկոլոգիականությունը և էկոլոգիապես անվտանգ սննդամթերքը (բնագավառին վերաբերող միջազգային և ազգային օրենքներ, սահմանումներ և այլ նմանատիպ փաստաթղթեր): Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները հիմնականում կատարվել են ճիշտ և հիմնավոր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, մեթոդական գրականություն, փաստաթղթերի նմուշներ, բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-010
Մոդուլի նպատակը	Մոդուլը նախատեսված է ուսանողի մոտ ձևավորել ապրանքների քիմիական բաղադրության մասին գիտելիքներ, ինչպես նաև սննդամթերքի բաղադրության մեջ մտնող կենսական կարևոր նյութերի՝ որպես էներգիայի աղբյուր դերը օրգանիզմի նյութափոխանակության գործընթացում:

Մոդուլի տևողությունը	68 ժամ տեսական ուսուցում՝ 34 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի սննդամթերքը որպես էներգիայի աղբյուր հասկացությանը, 2) ներկայացնի մարդու օրգանիզմի համար ջրի կարևոր նշանակությունը, 3) ներկայացնի հանքային նյութերի նշանակությունը, 4) բնութագրի ածխաջրերի կենսական նշանակությունը՝ որպես էներգիայի աղբյուր, 5) ներկայացնի սննդամթերքի մեջ ազոտ պարունակող նյութերի պարունակության նշանակությունը, 6) ներկայացնի սննդամթերքի մեջ պարունակող օրգանական թթուների, ճարպաթթուների բաղադրությունը, 7) ներկայացնի օրգանիզմի կենսագործունեության վրա ազդող ֆերմենտների և վիտամինների դերը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սննդամթերքը որպես էներգիայի աղբյուր հասկացությանը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պարենային ապրանքների դերը մարդու կենսունակության պրոցեսում, 2) ճիշտ է բացատրում պարենային ապրանքների քիմիական բաղադրությունը, 3) ճիշտ է տարբերակում սննդամթերքի մեջ մտնող օրգանական և անօրգանական նյութերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ պարենային ապրանքների դերի, դրանց քիմիական բաղադրության, սննդամթերքի մեջ մտնող օրգանական և անօրգանական նյութերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ պարենային ապրանքների դերն ու նշանակությունը մարդու կենսունակության գործընթացում, ▪ պարենային ապրանքների քիմիական բաղադրության բնութագիրը,

	▪ սննդամթերքի մեջ մտնող օրգանական նյութերի բնութագիրը, ▪ սննդամթերքի մեջ մտնող անօրգանական նյութերի բնութագիրը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու օրգանիզմի համար ջրի կարևոր նշանակությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ջրի նշանակությունը սննդամթերքների կազմի մեջ, 2) ճիշտ է ներկայացնում որոշ ապրանքատեսակներում ջրի տոկոսային քանակությունը, 3) ճիշտ է բնութագրում ջրի հատկությունները, սննդամթերքի մեջ գոյություն ունեցող ջրի տեսակները՝ կապված և ազատ, 4) ճիշտ է վերլուծում սննդամթերքի մեջ ջրի պարունակության և դրա բիոլոգիական արժեքի փոխադարձ կապը, 5) ճիշտ է ներկայացնում սննդամթերքի հատկությունից և նրա մեջ ջրի պարունակությունից կախված դրա պահման պայմանների ընտրությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ սննդամթերքների կազմում ջրի նշանակության, մարդու օրգանիզմում ջրի դերի, որոշ ապրանքատեսակներում ջրի տոկոսային քանակության, ջրի հատկությունների, սննդամթերքի մեջ գոյություն ունեցող ջրի տեսակների (կապված և ազատ), սննդամթերքում ջրի պարունակության և դրա բիոլոգիական արժեքի փոխադարձ կապի, սննդամթերքի հատկությունից և դրանում ջրի պարունակությունից կախված մթերքների պահման պայմանների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝

	▪ ջրի դերն ու նշանակությունը մարդու օրգանիզմում, ▪ ջրի դերն ու նշանակությունը սննդամթերքների կազմի մեջ, ▪ սննդամթերքների բնութագիրը ըստ ջրի պարունակության, ▪ սննդամթերքի մեջ գոյություն ունեցող ջրի տեսակների (կապված և ազատ) բնութագիրը, ▪ սննդամթերքի հատկությունից և նրա մեջ ջրի պարունակությունից կախված դրա պահման պայմանների ընտրության անհրաժեշտությունը և պահման պայմանների բնութագիրը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հանքային նյութերի նշանակությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում հանքային նյութերի դերը օրգանիզմի կենսունակության գործում, 2) ճիշտ է ներկայացնում հանքային էլեմենտների դասակարգումը. միկրոէլեմենտներ, մակրոէլեմենտներ, ուլտրա միկրոէլեմենտները, 3) ճիշտ է թվարկում հանքային տարրերով հարուստ սննդամթերք:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ օրգանիզմի կենսունակության գործում հանքային նյութերի դերի, հանքային էլեմենտների դասակարգման, միկրոէլեմենտների, մակրոէլեմենտների, ուլտրամիկրոէլեմենտների, հանքային տարրերով հարուստ սննդամթերքների, մարդու օրգանիզմի վրա առանձին տարրերի ոչ բավարար քանակի կամ ավելցուկի բացասական ազդեցության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝

	▪ հանքային նյութերի դերն ու նշանակությունը մարդու օրգանիզմում, ▪ հանքային էլեմենտների դասակարգումը, ▪ միկրոէլեմենտները և դրանց բնութագիրը, ▪ մակրոէլեմենտները և դրանց բնութագիրը, ▪ ուլտրամիկրոէլեմենտները և դրանց բնութագիրը, ▪ հանքային տարրերով հարուստ սննդամթերքները, հանքային տարրերի օրական պահանջը մարդու օրգանիզմի համար և առանձին տարրերի ոչ բավարար քանակի կամ ավելցուկի բացասական ազդեցությունը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել ածխաջրերի կենսական նշանակությունը՝ որպես էներգիայի աղբյուր
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ածխաջրերի սահմանումը, 2) ճիշտ է բնութագրում ածխաջրերով հարուստ մթերքները, 3) ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ ածխաջրի քանակությունը, 4) ճիշտ է բնութագրում ածխաջրերի տարանջատումը մոնոսախարիդների (պարզ շաքարներ), օլիգոսախարիդների (բարդ շաքարների) և պոլիսախարիդների (ոչ շաքարանման), 5) ճիշտ է ներկայացնում ածխաջրերի պարունակությունը ըստ առանձին սննդամթերքների:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ածխաջրերի սահմանման, ածխաջրերով հարուստ մթերքների, մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ ածխաջրի քանակության, մոնոսախարիդների,

	օլիգոսախարոհիդների, պոլիսախարոհիդների, ըստ առանձին սննդամթերքների ածխաջրերի պարունակության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ածխաջրերի սահմանման բովանդակությունը, ▪ ածխաջրերը որպես մարդու սննդի հիմնական բաղադրամաս և ածխաջրերով հարուստ մթերքները, ▪ ածխաջրերի օրական պահանջը մարդու օրգանիզմի համար, ▪ մոնոսախարիդների (պարզ շաքարներ) բնութագիրը, ▪ օլիգոսախարոհիդների (բարդ շաքարների) բնութագիրը, ▪ պոլիսախարոհիդների (ոչ շաքարանման) բնութագիրը : Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել սննդամթերքի մեջ ազոտ պարունակող նյութերի պարունակության նշանակությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է թվարկում սննդամթերքում ազոտ պարունակող քիմիական նյութերի ցանկը, 2) ճիշտ է մեկնաբանում սպիտակուցների դերը օրգանիզմի կենսունակության գործում, 3) ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի կողմից սպիտակուցի օրվա պահանջարկը, 4) ճիշտ է ներկայացնում ամինոթթուների դերը մարդու օրգանիզմի կենսունակության համար:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ սննդամթերքում ազոտ պարունակող քիմիական նյութերի ցանկի, օրգանիզմի կենսունակության գործում սպիտակուցների դերի, մարդու օրգանիզմի կողմից

	սպիտակուցի օրվա պահանջի, մարդու օրգանիզմի կենսունակության համար ամինաթթուների դերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ սննդամթերքների կազմի մեջ մտնող ազոտային նյութերը, ▪ սպիտակուցները որպես մարդու սննդի հիմնական բաղադրամաս և դրանց դերը օրգանիզմի կենսունակության գործում, ▪ սպիտակուցների օրական պահանջը մարդու օրգանիզմի համար, ▪ ամինոթթուները և դրանց դերը մարդու օրգանիզմի կենսունակության գործում: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել սննդամթերքի մեջ պարունակող օրգանական թթուների, ճարպաթթուների բաղադրությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ճարպաթթուների նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում ճարպաթթուների դերը օրգանիզմի նյութափոխանակության գործում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ ճարպաթթուների նշանակության, դասակարգման, ճարպաթթուների կողերի, սահմանային և ոչ սահմանային ճարպաթթուների, օրգանիզմի նյութափոխանակության գործում ճարպաթթուների դերի վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ ճարպաթթուների դերն ու նշանակությունը օրգանիզմի նյութափոխանակության գործում, ▪ ճարպաթթուների դասակարգումը,

	▪ ճարպաթթուների կոդերը, ▪ սահմանային և ոչ սահմանային ճարպաթթուներ: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել օրգանիզմի կենսագործունեության վրա ազդող ֆերմենտների և վիտամինների դերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վիտամինների և ֆերմենտների դերը օրգանիզմի կենսագործունեության մեջ, 2) ճիշտ է ներկայացնում սննդային հավելումները և դրանց դերը, 3) ճիշտ է թվարկում սննդամթերքում առավել հաճախակի հանդիպող վիտամինների անունները, 4) ճիշտ է ներկայացնում վիտամինների բացակայության ժամանակ օրգանիզմում առաջացող հիվանդությունները, 5) ճիշտ է ներկայացնում վիտամիններ A; B; D; E; C նշանակությունը օրգանիզմի իմունային համակարգի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ օրգանիզմի կենսագործունեության մեջ վիտամինների և ֆերմենտների դերի, սննդային հավելումների, սննդամթերքում առավել հաճախակի հանդիպող վիտամինների, ջրալուծ և ճարպալուծ վիտամինների, այդ խմբերում մտնող առանձին վիտամինների բնութագրման, վիտամինների բացակայության ժամանակ օրգանիզմում առաջացող հիվանդությունների, վիտամիններ A; B; D; E; C նշանակության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ վիտամինների դերը օրգանիզմի կենսագործունեության մեջ, ▪ ֆերմենտների դերը օրգանիզմի կենսագործունեության մեջ,

	▪ սննդային հավելումները, դրանց դերն ու նշանակությունը, ▪ վիտամինները որպես սննդամթերքների բաղադրատարր, ▪ ջրալուծ վիտամինները և դրանց բնութագիրը, ▪ ճարպալուծ վիտամինները և դրանց բնութագիրը, ▪ վիտամինների բացակայության ժամանակ օրգանիզմում առաջացող հիվանդությունները և A; B; D; E; C վիտամինների նշանակությունը օրգանիզմի իմունային համակարգի համար: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա թեմաների մշակումներ, թեստեր, տեսանյութեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-5-20-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ պարենային ապրանքների փորձաքննության վերաբերյալ, ծանոթացնել որակական և՝ քանակական փորձաքննության վարման կանոններին:
Մոդուլի տևողությունը	68 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կատարի ապրանքների որակական և քանակական փորձաքննություն ըստ վարման ընդհանուր կանոնների, 2) իրականացնի բուսական ծագման մթերքների փորձաքննություն,

	3) իրականացնի անասնաբուժական ծագման մթերքների փորձաքննություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդհունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարճ մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել ապրանքների որակական և քանակական փորձաքննություն ըստ վարման ընդհանուր կանոնների
Կատարման չափանիշներ	1) մեկնաբանում է հայտերի ներկայացումը, 2) կատարում է նմուշների ընտրումը, 3) կատարում է փորձաքննություն և արդյունքների ձևակերպում, 4) կատարում է պայմանագրերի փորձաքննությունը, 5) բացատրում է ապրանքի որակի փորձաքննությունը, նախնական պայմանագրի կնքումը, 6) կատարում է ուղարկվող ապրանքների մասնակի որակի և քանակի ստուգումը նախքան բեռնումը, 7) իրականացնում է ընդունվող ապրանքի մասնակի ընդունման փորձաքննությունը ըստ քանակի և որիակի, փաթեթավորման և մակնշման:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ փորձաքննության հայտերի ներկայացման սխեմաների, նմուշների ընտրման, փորձարկման իրականացման, փորձաքննության արդյունքների ձևակերպման, պայմանագրերի փորձաքննության ընթացքի, ապրանքի որակի փորձաքննության, նախնական պայմանագրի կնքման, ապրանքի նմուշների որակի փորձաքննության նպատակների և գործընթացի, տիպային նմուշների փորձաքննության, նախքան բեռնումը ուղարկվող ապրանքների մասնակի որակի և քանակի ստուգման, ընդունվող ապրանքի մասնակի ընդունման փորձաքննության (ըստ քանակի և որակի, փաթեթավորման և մակնշման) վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հայտերի ներկայացման գործընթացը և հայտերի ներկայացման սխեմաները, ▪ նմուշների ընտրման գործընթացը, ▪ փորձարկման իրականացման գործընթացը,

	▪ փորձաքննություն արդյունքների ձևակերպումը, փորձաքննության եզրակացություն և փորձաքննության ակտ, ▪ պայմանագրերի փորձաքննության նպատակը և գործընթացը, ▪ ապրանքի որակի փորձաքննության նպատակը և գործընթացը, տիպային նմուշների փորձաքննությունը, ▪ նախքան բեռնումը ուղարկվող ապրանքների մասնակի որակի և քանակի ստուգման գործընթացը, ▪ ընդունվող ապրանքի մասնակի ընդունման փորձաքննության (ըստ քանակի և որակի, փաթեթավորման և մակնշման) գործընթացը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր, փորձարկման ոլորտի անհրաժեշտ փաստաթղթեր և սահիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել բուսական ծագման մթերքների փորձաքննություն
Կատարման չափանիշներ	1) կատարում է հացահատիկի, լոբազգիների և դրանց վերամշակումը ստացված մթերքի փորձաքննություն, 2) կատարում է հացի, հացաբուլկեղենի և հրուշակեղենի փորձաքննություն, 3) կատարում է թարմ բանջարեղենի և պտուղների փորձաքննություն, 4) կատարում է բանջարեղենի, պտուղների և սնկերի վերամշակումից ստացված մթերքների փորձաքննություն, 5) կատարում է համային ապրանքների փորձաքննություն, 6) կատարում է ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքների փորձաքննություն, 7) կատարում է ծխախոտային ապրանքների փորձաքննությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ հացահատիկի, լոբազգիների և դրանց վերամշակումը ստացված մթերքի փորձաքննության, հացի, հացաբուլկեղենի և հրուշակեղենի փորձաքննության, թարմ

	բանջարեղենի և պտուղների փորձաքննության, բանջարեղենի, պտուղների և սնկերի վերամշակումից ստացված մթեքների փորձաքննության, թեյի և սուրճի որակի փորձաքննության, շաքար-ռաֆինադի և շաքարավազի որակի փորձաքննության, համեմունքների որակի փորձաքննության, ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննության, թույլ ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննության, ոչ ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննության, ծխախոտային ապրանքների որակի փորձաքննության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ▪ հացահատիկի որակի գնահատման ցուցանիշները, ▪ հատիկի սպառողական արժեքը բնութագրող ցուցանիշները, ▪ լոբազգիների որակի փորձաքննությունը, ▪ ձավարեղենի որակի փորձաքննությունը, ▪ մակարոնեղենի որակի փորձաքննությունը, ▪ հացի և հացաբուլկեղենի որակի փորձաքննությունը, ▪ հրուշակեղենի որակի փորձաքննությունը, ▪ թարմ պտուղների նկարագրությունը և որակի փորձաքննությունը, ▪ թարմ բանջարեղենի նկարագրությունը և որակի փորձաքննությունը, ▪ մրգերի, բանջարեղենի, պտուղների և սնկերի վերամշակումից ստացված մթեքների որակի փորձաքննությունը, ▪ թեյի և սուրճի որակի փորձաքննությունը, ▪ շաքար-ռաֆինադի և շաքարավազի որակի փորձաքննությունը, ▪ համեմունքների որակի փորձաքննությունը, ▪ ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննությունը, ▪ թույլ ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննությունը, ▪ ոչ ալկոհոլային ըմպելիքների որակի փորձաքննությունը, ▪ ծխախոտային ապրանքների որակի փորձաքննությունը: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում
--	--

	բուսական ծագման մթերքների փորձաքննություն:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, թեստեր, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր, փորձարկման ոլորտի անհրաժեշտ փաստաթղթեր և սահիկներ: Հնարավորության դեպքում պարապմունքներն անց են կացվում համապատասխան լաբորատոր պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իրականացնել անասնաբուժական ծագման մթերքների փորձաքննություն
Կատարման չափանիշներ	1) կատարում է կաթի և կաթնամթերքի փորձաքննություն, 2) կատարում է ճարպերի փորձաքննություն, 3) կատարում է մսի և մսամթերքի փորձաքննություն, 4) կատարում է ձվի և ձվամթերքի փորձաքննություն, 5) կատարում է ձկան և ձկնամթերքի փորձաքննություն, 6) կատարում է մեղրի փորձաքննություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ կաթի, կարագի, պանրի, պաղպաղակի, կաթի պահածոների, թթու կաթնամթերքի փորձաքննության, բուսական յուղերի որակի փորձաքննության, մարգարինի որակի փորձաքննության, մսի և ենթամսամթերքի, ընտանի թռչունների մսի, երշիկեղենի և մսապուխտների, մսային կիսապատրաստուկների, մսի պահածոների որակի փորձաքննության, ձվի և ձվամթերքի որակի փորձաքննության, ձկան և ձկնամթերքի որակի փորձաքննության, մեղրի որակի փորձաքննության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - կաթի որակի փորձաքննությունը, - կարագի որակի փորձաքննությունը, - պանրի որակի փորձաքննությունը,

